«Նոր ժամանակի կրթություն» Հ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Գրաճանաչության կազմակերպման առանձահատկությունները

Առարկան՝ *Դասվար*

Հետազոտող ուսուցիչ՝ Հեղինե Մուրադյան

Ուսումնական հաստատություն՝ ԼԽՈՒԵ հատուկ կրթահամալիր

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ…… 3

1.1Գրաճանաչության ուսուցման առանձնահատկությունները……

1.2Գրաճանաչության ուսուցման աշխատանքի խնդիրները, բովանդակությունը, կազմակերպումը լսողության խանգարումներ ունեցող երեխաների մոտ…….. 1

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ…….

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……

Հարց՝ Ո՞րն է գրաճանաչության ուսուցման առանձնահատկությունները լսողության խանգարումներ ունեցող երեխաների կրթահամալիրում

Ներածություն

Գրաճանաչության ուսուցման զարգացման պատմական գործընթացում մեկը մյուսին փոխարինել են տարբեր մանկավարժահոգեբանական հիմնավորում ունեցող մեթոդներ, հիմնարար տեսություններ, որոնք անցնում են այբբենարանից այբբենարան, մեթոդիկայից մեթոդիկա: Եվ դա բնական է, որովհետև ժամանակի քննությունը բռնած մոտեցումների կիրառմամբ և կատարելագործմամբ է միայն ապահովվում գիտության առաջընթացը:

Այսօր հայ իրականության մեջ գործում են գրաճանաչության ժամանակակից վերլուծական-համադրական, հնչյունավանկային և վերլուծական-համադրական հնչյունաբառային մեթոդները: Այդ մեթոդները հայ դպրոցում գիտականորեն հիմնավորված ներդրեց պրոֆեսոր Ա. Տեր-Գրիգորյանը, որի ստեղծած այբբենարանները լուրջ քայլ էին հայ այբբենագիտության մեջ:

Գրաճանաչության ուսուցումը հիմնականում կազմակերպվում է I դասարանում: Այն բաժանվում է 3 հիմնական շրջանների՝

1. նախապատրաստական (նախաայբբենական) շրջան
2. գրուսուցման կամ բուն այբբենական շրջան

հետայբբենական շրջան

Աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել գրաճանաչության ուսուցման առանձնահատկությունները լսողության խանգարումներ ունեցող երեխաների մոտ:

Աշխատանքի խնդիրներն են՝

- ուսումասիրել հիմնահարցի վերաբերյալ գիտամեթոդական գրականություն
- վերլուծել գրաճանաչության կազմակերպման առանձնահատկությունները լսողության խանգարումներ ունեցող երեխաների մոտ

1.1.Վաղ գրաճանաչության ուսուցման առանձնահատկությունները

Ուսումնական գործունեության ընթացքում ամենակարևոր խնդիրներից մեկը սովորողների խոսքի զարգացումն է, հաղորդակցվելու կարողության ձևավորումը, քանի որ մարդու հիմնական յուրահատկություններից մեկը հաղորդակցվելու ընդունակությունն է. խոսքի միջոցով են իրագործվում բարձրագույն հոգեկան գիտակցական գործընթացներն ու շփման առավել կատարյալ, սոցիալական տեսակետից անհրաժեշտ ձևերը: Ուսումնական գործունեությունը բարդ ու բազմակողմանի գործընթաց է, և այն առավել արդյունավետ իրականացնելու համար հարկավոր է ճիշտ կազմակերպված աշխատանք, որի ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ սովորողը գիտելիքների ձեռքբերմանը զուգահեռ ստանում է իր կյանքի հետագա գործունեության համար անհրաժեշտ սոցիալական փորձ: Ուսումնառության ընթացքում իրականացվում է երեխայի հոգեկանի զարգացումը, ձեռք է բերվում գիտելիք, մշակվում այլընտրանքային ճանապարհով գիտելիքների ձեռքբերման կարողություն, ձևավորվում ճանաչողական ընդունակություններ, մարդկանց և իր նկատմամբ սեփական վերաբերմունքի դրսևորում: Կրթության հետ միաժամանակ երեխան պետք է դառնա նախաձեռնող, կարողանա ինքնուրույն հետազոտել, ստեղծագործել, ձեռք բերած գիտելիքները կիրառել գործնականում, փոխանցել իր իմացածը, ձեռք բերել հաղորդակցական, համագործակցային կարողություններ և ինքնուրույնություն: Կրտսեր դպրոցական տարիքը գիտելիքների կուտակման տարիք է, և այս տարիքի երեխաները պատրաստակամ են գիտելիքներ ձեռք բերելու հարցում: Ուսուցման հիմքը դրվում է ուսումնառության սկզբնական շրջանում և այնուհետև շարունակվում դպրոցական ողջ տարիների ընթացքում, և ոչ միայն: Նոր դպրոց մտնող երեխայի խոսքի զարգացման աշխատանքներն իրականացվում են լեզվական տարրական գիտելիքների ուսուցման միջոցով, որի ընթացքում լուծվում են աշակերտի խոսքի զարգացման մի շարք խնդիրներ՝ հնչյունների ուղղագրությունն ու ուղղախոսությունը,

ճիշտ շեշտադրումը, բառակապակցություններ, ապա նախադասություններ կառուցելու կարողությունը, բառիմաստի ընկալման, ճիշտ կիրառման և պատկերավոր խոսք կառուցելու կարողությունը: Ամրապնդման համար համապատասխանաբար կատարվում են ճանաչողական և կիրառական վարժություններ: Սկսած նախաայբբենական շրջանից՝ աշակերտներին գաղափար է տրվում բանավոր և գրավոր խոսքի մասին, պատումի, նախադասության մասին, զարգացվում նրանց տեսողական-պատկերային մտածողությունը, ձևավորվում մտքերը հասկանալի և ճիշտ ձևակերպելու, հաղորդակցվելու, ինքնարտահայտվելու կարողություններ: Ուսուցման ընթացքում ուսուցիչը կրտսեր դպրոցականների առջև խնդիր է դնում իր կողմից առաջադրվող հարցերին տալ լիարժեք և տրամաբանված պատասխաններ, խոսել ճիշտ ու գրագետ, խուսափել անհարկի կրկնություններից: Հատկապես ուշադրություն պետք է դարձնել, որ աշակերտը ազատ և անկաշկանդ մտածի և հաղորդակցվի, կարողանա հասկանալ տրված հարցերը և ճշգրիտ պատասխանել դրանց, կարողանա ճիշտ կողմնորոշվել խոսքային իրադրության մեջ: Երեխային առաջարկում ենք պատմել իր, ընտանիքի, ընկերների, սիրելի իրի և այլ առարկաների կամ երևույթների մասին, սովորեցնում համեմատել և գտնել առարկաների նմանություններն ու տարբերությունները և այլն, ձևավորում ենք դիմացինի խոսքը լսելու կարողություն: Աշխարհաճանաչողական տեղեկությունների միջոցով զարգացնում ենք խոսքն ու մտածողությունը, նոր բառերի միջոցով հարստացնում բառապաշարը, այն մաքրում ժարգոնային, բարբառային բառերից: Արդեն ավագ նախադպրոցական շրջանում աշխատանքներ են տարվում խոսքի, բառի, նախադասության և տեքստի շուրջ, գործնականում կիրառում լեզվական նախնական գիտելիքները: Օրինակ՝ բառի մասին գաղափար կազմելու համար երեխաներին հարցնում ենք, թե ինչ են տեսնում իրենց շրջապատում, աշակերտները սկսում են անվանել տարբեր առարկաներ, այնուհետև հարցնում ենք, թե ինչպես են տարբերում այդ առարկաները, աշակերտները անվանում են առարկաների տարբեր հատկանիշներ, բնութագրում են դրանք, ասում, թե որ առարկան ինչի համարէ: Գրաճանաչության մեթոդիկան զբաղվում է գրաճանաչության ուսուցման հարցերով՝ գրուսուցման ժամանակակից մեթոդի, 6—7 տարեկան երեխաների տարիքային առանձնահատկությունների, այբբենարանի կառուցվածքի ու

բովանդակության, ուսումնական աշխատանքի գիտական կազմակերպման, երեխաների համակողմանի դաստիրակության խնդիրների ընդգրկումով: Այս առումով էլ գրաճանաչության մեթոդիկան հենվում է ժամանակակից մանկավարժության ու դիդակտիկայի, մանկավարժական հոգեբանության ու մարդաբանության, մայրենի լեզվի մեթոդիկայի հնչյունաբանության վրա, որոնք նրա տեսական հիմունքներն են կազմում՝ յուրաքանչյուրը յուրովի նպաստելով գրաճանաչության ուսուցման գիտական սկզբունքների մշակմանը: Հաշվի առնելով 5- 6 տարեկան երեխաների տարիքային առանձնահատկությունները՝ վաղ գրաճանաչության ծրագրային խնդիրների լուծումն իրականացվում է բազմազան խաղերով, դիդակտիկ վարժություններով, հանելուկ-խնդիրներով, խաղ-վարժություններով, շուտասելուկներով:

Գրաճանաչության ուսուցումն ունի 2 շրջան՝ նախապատրաստական և բուն գրուսուցման: Նախապատրաստական շրջանում երեխաների խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքներում գլխավորը նրանց բառապաշարի ճշտման, հղկման ու հարստացման, ինչպես նաև կապակցված խոսք կառուցելու ունակության մշակումն ու զարգացումն է: Այս շրջանում հատուկ աշխատանք է տարվում նկարի, տեսածի, լսածի մասին կապակցված և ամբողջական ձևով պատմելու, խոսքից կամ պատմությունից նախադասությունն առանձնացնելու, նախադասությունը բառերի վերլուծելու, պահանջված բառն անջատելու, բառը վանկերի բաժանելու, վանկերը հնչյունների վերածելու և այդ հնչյունների շարքից անհրաժեշտ հնչյունն առանձնացնելու կարողությունները մշակելու ուղղությամբ: Երեխաներին գաղափար է տրվում նաև հնչյունի և տառի մասին (հնչյունը լսում ենք, արտասանում, տառը տեսնում ենք, կարդում ու գրում):

Վաղ գրաճանության նախապատրաստման գործընթացը զարգացնող դարձնելու հիմնական պահանջը երեխաների ուսումնական գործունեության ընթացքում՝ դա ինքնուրույն աշխատանքի ծավալումն է և սիմվոլիկ զննականության օգտագործումը:

Գրաճանաչության նախապատրաստման հաջորդ սկզբունքը դաստիարակող ուսուցման սկզբունքն է, որը դիդակտիկայում կիրառվող հիմնարար սկզբունքներից է:

1.2Գրաճանաչության ուսուցման աշխատանքի խնդիրները, բովանդակությունը, կազմակերպումը լսողության խանգարումներ ունեցող երեխաների մոտ

Թույլ լսող դպրոցականների խոսքի զարգացման համար գրաճանաչության յուրացումն ունի շատ կարևոր նշանակություն: Այս երեխաների կողմից բառերի հնչունային կազմը յուրացնելու դժվարությունները առաջադրում են հատուկ խնդիրներ գրաճանաչության ընթացքում: Հայտնի է, որ թույլ լսող երեխաները կամ ամբողջությամբ չեն արտասանում բառերը, կամ էլ բառերում բաց են թողնում այն հնչյունները, որոնք չեն ընկալվել նրանց կողմից: Եվ քանի որ ուսուցչին ոչ միշտ է հաջողվում բանավոր խոսքում նկատել և շտկել այդ խանգարումները, ապա գրավոր խոսքի միջոցով այդ սխալներն առավել ճշգրտորեն կարելի է շտկման ենթարկել: Այդ իսկ պատճառով գրելու և կարդալու ուսուցման գործընթացում, երբ իրականացվում է բառի հնչյունա-տառային վերլուծությունը, ստեղծվում են շատ բարենպաստ պայմաններ բառերը ճիշտ արտասանելու և հետևաբար նաև՝ ճիշտ գրելու համար:

Գրաճանաչության մեթոդների դասակարգումը: Գրաճանաչության մեթոդները նույնքան հին են, որքան գրերը, օրինակ՝ հայոց լեզվի գրաճանաչության մեթոդիկան սկսվում է 396թ.-ից: Դարերի ընթացքում գործածվել են գրաճանաչության բազմաթիվ մեթոդներ: Դրանք ուսումնասիրելու համար անհրաժեշտ եղան դասակարգել այդ մեթոդները, 19-րդ դարի 70-ական թվականներին մեթոդների դասակարգման փորձ կատարեց գերմանացի մանկավարժ Քեռը, որպես մեթոդների դասակարգման ելակետ նա ընդունեց գրաուսուցման աշխատանքի կազմակերպման եղանակը, ըստ որի մեթոդները լինում են 3 խմբի՝

- համադրական
- վերլուծական
- վերլուծական-համադրական

Համադրական մեթոդը սովորողներին տանում է միավորներից դեպի ամբողջը, այդ դեպքում վերլուծության բացակայությունը դժվարեցնում է գրաճանաչության գործը: Այդ մեթոդներով աշխատելիս սովորողներին նախ գաղափար էր տրվում բառի, հնչյունի կամ վանկի մասին, ապա դրանցից կազմվում են բառեր և

նախադասություններ: Փաստորեն այս մեթոդի կիրառմամբ ուսուցումը ստանում էր միակողմանի բնույթ (չկար կենդանի խոսքի վերլուծությունը):

Վերլուծական խմբի մեթոդներն էլ, հակառակը, ուսուցումը սկսում են ամբողջական խոսքից, նախադասությունից կամ բառից: Այս խմբի մեթոդներն էլ ունեն մեկ այլ թերություն, այսինքն՝ վերլուծությունից հետո համադրություն չէր կատարվում:

Ռուս մեթոդիստ Աֆանասևը, որպես մեթոդների տարբերակման ելակետ, գրուսուցման հիմքում դրեց ուսուցվող լեզվական նախնական միավորը՝ հնչյուն, տառ, վանկ, բառ: Սակայն մեթոդների դասակարգման այս 2 ելակետերն էլ, կարևոր լինելով հանդերձ, ունեին միակողմանիություն:

Ավելի ճիշտ է մեթոդները դասակարգելիս հիմք ընդունել 2 ելակետ, որի դեպքում ունենում ենք՝

1. վերլուծա-համադրական հնչյունային
2. վերլուծա-համադրական հնչույթավանկային
3. վերլուծա-համադրական հնչույթաբառային

Գրաճանաչության ուսուցումը որպես թույլ լսող երեխաների մտավոր և խոսքի զարգացման միջոց: Ինչպես հայտնի է, հանրակրթական դպրոցի սովորողները տիրապետում են կարդալու և գրելու կարողություններին որպես երկրորդային խոսքի հմտություններ, քանի որ արդեն ձևավորված է նրանց բանավոր խոսքը և խոսքային մտածողությունը: Այս երեխաները, կարդալու և գրելու հմտությունները յուրացնելիս հենվում են արդեն ձևավորված և որոշակիորեն զարգացած բանավոր խոսքի վրա: Հայտնի է նաև, որ գրելու և կարդալու հմտությունները յուրացնելը կապված է նուրբ հնչութային ընկալումների, հնչյունային վերլուծա-համադրական գործընթացների, խոսքի բաղադրիչների օգտագործման հետ:

Ի տարբերություն իրենց լսող հասակակիցների, թույլ լսող երեխաները գրաճանաչության ուսուցումից առաջ նման հմտություններով ու կարողություններով օժտված չեն, ավելին՝ այդ հմտությունների ձեռքբերումը կապված է նշանակալի դժվարությունների հետ (լսողական խանգարումներ, խոսքի թերզարգացում):

Այստեղից հետևում է, որ հանրակրթական դպրոցում գործող գրաճանաչության ուսուցման լեզվաբանական հիմնավորումը ակնհայտորեն բավարար չէ թույլ լսող

երեխաների համար: Պետք է հաշվի առնել նաև այն փաստը, որ թույլ լսող երեխաները խոսքի բանավոր և գրավոր կոդերը յուրացնում են միաժամանակ և երբեմն նույնիսկ գրավորի յուրացումը առաջ է անցնում բանավոր խոսքի յուրացումից:

Հայտնի է գրի՝ քաղաքակրթության զարգացման համար ունեցած մեծ ու կարևոր նշանակությունը, դրանից կարելի է անել հետևություն.

1. Քանի որ գիրը ծագել և օգտագործվում է որպես տեղեկատվության փոխանցման միջոց, հետևաբար գրաճանաչ լինելը ծառայում է խոսքային հաղորդակցմանը:
2. Բանավոր խոսքը և գրավորը անբաժան են իրարից:
3. Գրաճանաչության յուրացումը գրավոր խոսքի կոդի յուրացում է և դրա կոդի բացահայտումը: Եվ եթե դպրոցի ուսումնական գործընթացը կարելի է բնորոշել որպես սոցիալական փորձի յուրացման գործընթաց, ապա գրաճանաչության յուրացումը կարևոր նախապայման է այդ գործընթացն իրականացնելու համար:

Կարդալու և գրելու յուրացումը հնարավորություն է տալիս շատ ինֆորմացիա ստանալու, գրավոր հաղորդակցվելու, մարդու առջև բացում է նոր, ավելի մեծ հնարավորություններ մտավոր, բարոյական, հուզական, գեղագիտական զարգացման համար:

Բուն գրաճանաչության գործընթացը ևս ունի մեծ ազդեցություն երեխաների խոսքի և մտավոր կարողությունների զարգացման համար.

Երեխան պետք է գիտակցաբար վերլուծի իր խոսքը, լսի նրա առանձին տարրերի հնչողությունը, համեմատի դրանք՝ առանձնացնելով ընդհանրություններն ու տարբերությունները: Երեխան համեմատում է առանձնացված հնչյունները, վանկերը, բառերը դրանց գրաֆիկական նշանների հետ կամ հակառակը, վարժվում է համադրելու մեջ և այլն: Բազմակի վերլուծահամադրական վարժությունների միջոցով մշակվում է գործունեության ընդհանրացված մոտեցում խոսքային նյութի նկատմամբ և այլն:

Կարդալու և գրելու կարողության նշանակությունը բնականաբար է'լ ավելի է մեծանում, երբ մարդը բանավոր խոսքն օգտագործելու սահմանափակ հնարավորություններ ունի: Թույլ լսող երեխաների համար գրավորի յուրացումը նախ և առաջ միջոց է բանավոր խոսքն առավել ճիշտ և տարբերակված հասկանալու համար և հետևաբար առավել շատ հաջողությունների հասնելու, բառի հնչյունային կազմը ճանաչելու, դրանց արտաբերման առանձնահատկությունները պարզեցնելու համար:

Առանց խոսքի ընկալման և արտաբերման կարողությունների կատարելագործման, անհնար է նաև խոսքի իմաստային կողմի յուրացումը, լեզվի կառուցվածքի ճանաչումը (պրակտիկ կարողությունների յուրացման համար, խոսքը պրակտիկայում օգտագործելու համար, բառագոյացումը, բառակազմությունը և այլն): Գրավորի օգտագործումը նպաստում է բառապաշարի առավել կայուն և արդյունավետ ընդլայնմանը: Վերջինս կարևոր գործոն է թույլ լսող երեխաների խոսքի թերզարգացումը հաղթահարելու համար: Լեզվական նյութի յուրացումը զարգացնում և հարստացնում է երեխաների խոսքը և մտածողությունն ընդհանրապես, հիմք է ստեղծում ինքնուրույն գրավոր խոսքի զարգացման համար:

Նախապատրաստական շրջան: Այս շրջանը լուծում է ինչպես բուն գրաճանաչությունը՝ կարդալու և գրելու կարողությունը հաջողությամբ տիրապետելու մի շարք խնդիրներ, այնպես էլ մի շարք մանկավարժական խնդիրներ, որոնք նպաստում են ամբողջ հետագա աշխատանքների համար: Այս շրջանի խնդիրներն են՝

1. Աշակերտներին ծանոթացնել դպրոցի կարգ ու կանոնին (ռեժիմ), դասարանում պահելու կարգին, դպրոցի շենքին, շրջակա տարածքին, միմյանց:

2. Ուսուցիչը ուսումնասիրում է աշակերտական կազմը, ստեղծում է փոխադարձ կապ:

3. Ուսումնական գործունեության հմտությունների ձևավորում (երեխաները նկարում են, խաղում, ուսուցիչը սովորեցնում է հասկանալ իրեն դիմած խոսքը և այլն):

4. Խոսքի զարգացում (իմպրեսիվ խոսք, էքսպրեսիվ խոսք, երկխոսություն մենախոսություն, բառապաշար, հնչյունային կողմ, քերականական կողմ, պատմություն, նախադասություն, բառ, վանկ, հնչյուն /տառ/՝ ձայնավոր, բաղաձայն, դրանց գծապատկերները):

5. Շրջակա միջավայրի մասին պատկերացումների ճոգրտում և ընդլայնում:

6. Լսողական ընկալումների զարգացում, հնչյունային վերլուծության և համադրության զարգացում:

7. Տեսողական ընկալումների և տարածական կողմնորոշման զարգացում:

8. Արտաբերական ապարատի մկանների մարզում, հնչյունների արտաբերման ճշգրտում:

9. Ձեռքը գրելուն նախապատրաստում. մանր մկանների, շարժումների կոորդինացիայի զարգացում:

10. Հոգեկան գործընթացների՝ մտածողության հիշողության, ուշադրության զարգացում:

Այբբենական շրջանում ծրագրով նախատեսվում են հետևյալ պահանջները՝

ա) կատարել բառերի հնչյունա-տառային վերլուծություն

բ) հնչյունային վերլուծության և համադրության վերաբերյալ կատարել վարժություններ (տրված այբուբենով)

գ) կարողանալ կարդալ վանկեր, բառեր, նախադասություններ (հստակ, բարձր, պահպանելով դադարները և այլն)

դ) կարողանալ կատարել գրավոր վարժություններ

ե) կարողանալ համեմատել նկարը, առարկան, գործողությունը, տեքստում կարդացած բառի, նախադասության հետ:

Ընթերցանությունը սկզբում պետք է լինի վանկային, իսկ աստիճանաբար նաև՝ բառային:

Ծրագրով նախատեսվում են նաև պահանջներ գրավորին՝

ա) նստելու կանոնների յուրացում, տետրը ճիշտ պահելու և գրիչը ճիշտ բռնելու կաննոների իմացություն

բ) կարողանալ գրել տառեր, վանկեր, բառեր, նախադասություններ

գ) կարողանալ արտագրել ձեռագիր և տպագիր բնագրից, լրացնել ծանոթ բառեր, ավելացնել բաց թողած տառերը, լրացնել կարճ նախադասությունները՝ նկարով, լրացնել բառը, որում տրված է I վանկը և այլն

դ) կարողանալ գրել բառեր և նախադասություններ թելադրությամբ

ե) կիրառել որոշ տարրական ուղղագրական կանոններ (մեծատառը, վերջակետը, տողադարձը):

Գրաճանաչության ուսուցման աշխատանքը հիմնականում ընթանում է ֆրոնյալ (խմբակային) ձևով, սակայն անհրաժեշտության դեպքում ցուցաբերվում է նաև անհատական մոտեցում:

Գրաճանաչության դասերը կարող են լինել շատ բազմազան, սակայն դրանով հանդերձ, որպես կանոն, դրանք կազմված են հետևյալ բաղադրիչներից.

ա)Տվյալ դասի բառերի և նախադասությունների բովանդակության հասկացման ստուգում (նայել այբբենարանի էջերը)

բ)Բառերի վանկային, հնչյունային վերլուծություն՝ օգտագործելով այբբենարանը,

գ)Աշխատանք կտրտված տառերով (վանկերի, բառերի, նախադասությունների կազմում)

դ)Այբբենարանի նյութի ընթերցում (բառեր, կարճ նախադասություն, կապակցված բնապատկեր)՝ ստուգելով կարդացածի հասկացումը

գ)Գրավորի վարժություններ (տառեր, վանկեր, նախադասություններ, բաց թողած բառերի լրացում, թելադրություններ, սխալների ուղղում:

Գրաճանաչության դասերի կահավորման մեջ մտնում են՝ այբբենարաններ, տառադարաններ (անհատական և դասարանի) առարկայական, իրավիճակային և սյուժետային նկարներ, բառերով և նախադասություններով քարտեր, պաստառներ, մեծ պատկերված տառեր, վանկային աղյուսակներ, բառերի, նախադասությունների գրաֆիկական սխեմաներ և այլն;

Հետայբբենական շրջանում երեխաները սկսում են կարդալ առավել ծավալուն բնագրեր և այդ դասերն իրենց բնույթով մոտենում են բացատրական ընթերցանության պահանջներին: <<Գրաճանաչության ուսուցում>> բաժնի հաջող իրականացման համար անհրաժեշտ է մի շարք մեթոդական սկզբունքների իրագործում.

1. Գրաճանաչության յուրաքանչյուր դասը պետք է կառուցվի հատուկ ընտրված նյութի հիման վրա (հնչյուններ, տառեր, վանկեր, բառեր, արտահայտություններ և կարճ բնագրեր): Իմաստ չունի կարդալու, վերլուծելու և համադրելու վարժություններ կատարել երեխաներին անծանոթ բառերի հիման վրա:

2. Կարդալու և գրելու հմտությունների յուրացումը թույլ լսող երեխաների կողմից պետք է ընթանա միաժամանակ և փոխկապակցված լինի բանավոր խոսքի ու մտածողության զարգացման գործընթացի հետ:

Այս առումով գրաճանաչության դասի մասին պետք է ասել, որ դրանք բանավոր և գրավոր խոսքի զարգացման այնպիսի դասերն են (դրա հետ կապված նաև ճանաչողական գործունեության զարգացման), որոնց հիմնական բովանդակությունը կազմում են հատուկ ընտրված լեզվական նյութով կարդալու և գրելու վարժությունները:

Ճիշտ է, մի կողմից խոսքային գործունեության այնպիսի ձևերը, ինչպիսիք են բարձրաձայն ընթերցանությունը, տրված օրինակից արտահայտությունը, թելադրությամբ գրելը և այլն չի կարելի համարել հաղորդակցում: Սակայն դա չի

նշանակում, որ դրանք չունեն իրենց կարևոր դերն ու նշանակությունը սովորողների խոսքային գործունեության զարգացման մեջ:

Նախ՝ դրանք հիմք են ստեղծում, հնարավորություն, որպեսզի երեխաները օգտագործեն բառերը հաղորդակցման մեջ (ճշտվում է արտաբերումը, կատարելագործվում է վերլուծություն և համադրություն կատարելու կարողությունները, չշգրտվում և ամրապնդվում է բառապաշարը, ճշգրտվում է բառերի նշանակության հասկացումը, զարգանում է խոսք կառուցելու ունակությունը:

2-րդ՝ գրաճանաչության դասին անցկացվող աշխատանքի բոլոր ձևերը պահանջում են հաղորդակցում (զրույց նկարի հիման վրա, ուսուցչի պարզաբանումներն ու բացատրությունները և այլն): Այս դասերի ընթացքում գրեթե միշտ ծագում են այնպիսի իրավիճակներ, որոնք դրդում են կենդանի շփման ու հաղորդակցման: Ուսուցչի կարևոր խնդիրն է՝ կանխամտածված խորացնել (ուժեղացնել) և օգտագործել գրաճանաչության դասի բոլոր պահերը, որը կմարզի երեխաների խոսքը:

3. Գրաճանաչության դասերին հատուկ ուշադրություն պետք է դարձվի բառի հնչյունա-տառային և վանկային կառուցվածքի յուրացման վրա: Այս աշխատանքը մեծ չափով կանխորոշում է ոչ միայն կարդալու և գրելու յուրացման հաջողությունը, այլև բանավոր խոսքի, որն էլ վերջին հաշվով դրական ազդեցություն է ունենում թույլ լսող երեխաների խոսքի զարգացման վրա ընդհանրապես: Դա բացատրվում է նրանով, որ նման աշխատանքը նպաստում է բանավոր խոսքի ընկալման կատարելագործմանը՝ հենվելով պահպանված լսողության և տեսողության վրա, օգնում է արտաբերման ճշգրտմանը:

4. Թույլ լսող երեխաների գրաճանաչության ուսուցման ընթացքում ուսուցիչը պետք է ձգտի խոսքային գործունեությանը մասնակցող զգայարանների համալիր օգտագործմանը, այդ թվում նաև պահպանված լսողությունը:

5. Թույլ լսող երեխաների գրաճանաչության ուսուցումը պետք է ընթանա սովորողների գիտակցված գործունեության պարագայում (գիտակցորեն կատարեն վերլուծահամադրական առաջադրանքները և այլն):

6. Աստիճանաբար մեծացնել երեխաների ինքնուրույնության աստիճանը հանձնարարությունների կատարման ընթացքում:

7. Թույլ լսող երեխաներին գրաճանաչության ուսուցման ընթացքում օգտագործել կարդալու 2 տեսակ՝ գլոբալ (ամբողջ բառերի և նախադասությունների ճանաչում և վերարտադրում) և վերլուծահամադրական:

Ի տարբերություն իրենց նորմալ լսող հասակակիցների ԼԽՈՒԵ-ը գրաճանաչության ուսուցումից առաջ նման հմտություններով ու կարողություններով օժտված չեն, ավելին՝ այդ հմտությունների ձեռքբերումը կապված է նշանակալի դժվարությունների հետ (լսողության խանգարում, դրա հետ կապված խոսքի թերզարգացում և այլն):

Այստեղից հետևում է, որ հանրակրթական դպրոցում գործող գրաճանաչության ուսուցման լեզվաբանական հիմնավորումն ակնհայտորեն բավարար չէ լսողության խանգարում ունեցող երեխաների համար: Պետք է հաշվի առնել նաև այն փաստը, որ լսողության խանգարում ունեցող երեխաները խոսքի բանավոր և գրավոր կոդերը յուրացնում են միաժամանակ և երբեմն նույնիսկ գրավորի յուրացումը առաջ է անցնում բանավոր խոսքի յուրացումից:

Հայտնի է գրի՝ քաղաքակրթության զարգացման համար ունեցած մեծ ու կարևոր նշանակությունը, դրանից կարելի է հետևություններ անել:

1. Քանի որ գիրը ծագել և օգտագործվել է որպես ինֆորմացիայի փոխանցման միջոց, հետևաբար գրաճանաչ լինելը ծառայում է խոսքային հաղորդակցմանը:
2. Բանավոր խոսքը և գրավորը անբաժան են իրարից:
3. Գրաճանաչության յուրացումը գրավոր խոսքի կոդի յուրացում է և կոդի բացահայտումը: Եվ եթե դպրոցի ուսումնական գործընթացը կարելի է բնորոշել որպես սոցիալական փորձի յուրացման գործընթաց, ապա գրաճանաչության յուրացումը կարևոր նախապայման է այդ գործընթացն իրականացնելու համար:

Կարդալու և գրելու յուրացումը հնարավորություն է տալիս շատ տեղեկություններ ստանալու, գրավոր հաղորդակցվելու, մարդու առջև բացում է նոր, ավելի մեծ հնարավորություններ, մտավոր, բարոյական, հուզական, գեղագիտական զարգացման համար:

Բուն գրաճանաչության գործընթացը ևս ունի մեծ ազդեցություն երեխաների խոսքի և մտավոր կարողությունների զարգացման համար. երեխան պետք է

գիտակցաբար վերլուծի իր խոսքը, լսի նրա առանձին տարրերի հնչողությունը, համեմատի դրանք՝ առանձնացնելով ընդհանրություններն ու տարբերությունները: Երեխան համեմետում է հանձնարարված հնչյունները, վանկերը, բառերը դրանց գրաֆիկական նշանների հետ կամ հակառակը, վարժվում է համադրելու մեջ և այլն: Բազմակի վերլուծահամադրական վարժությունների միջոցով մշակվում է գործունեության ընդհանրացված մոտեցում խոսքային նյութի նկատմամբ և այլն:

Կարդալու և գրելու կարողության նշանակությունը, բնականաբար, էլ ավելի է մեծանում, երբ մարդը բանավոր խոսքը օգտագործելու սահմանափակ հնարավորություններ ունի: Լսողության խանգարում ունեցող երեխաների գրավորի յուրացումը նախ և առաջ միջոց է բանավոր խոսքի առավել ճիշտ և տարբերակված հասկանալու համար և հետևաբար առավել ճիշտ հաջողությունների հասնելու բառի հնչյունային կազմը ճանաչելու, դրանց արտաբերման առանձնահատկությունները պարզեցնելու համար:

Առանց խոսքի ընկալման և արտաբերման կարողությունների կատարելագործման, անհնար է նաև խոսքի իմաստային կողմի յուրացումը, լեզվի կառուցվածքի ճանաչումը (պրակտիկ կարողությունների յուրացման համար, խոսքը պրակտիկայում օգտագործելու համար, բառագոյացումը, բառակազմությունը և այլն): Գրավորի օգտագործումը նպաստում է բառապաշարի առավել կայուն և արդյունավետ ընդլայնմանը: Վերջինս կարևոր գործոն է թույլ լսող երեխաների խոսքի թերզարգացումը հաղթահարելու համար: Լեզվական նյութի յուրացումը զարգացնում է և հարստացնում երեխաների խոսքը և մտածողությունն ընդհանրապես, հիմք է ստեղծում ինքնուրույն գրավոր խոսքի զարգացման համար:

Լսողության խանգարում ունեցող երեխաների բոլոր դասերին հատուկ ուշադրություն են դարձնում աշխատանքի այնպիսի ձևերին, որոնք նպաստում են խոսքի հաղորդակցման գործառույթի զարգացմանը: Դրանք իրադարձությունների նկարագրման, նամակների գրության, գործնական փաստաթղթերի գրության ուսուցման ուղղությամբ կազմակերպվող աշխատանքներ են: Պետք է նշել, որ քանի որ այդ կապակցված պատմություններից յուրաքանչյուրն ունի իր հասցեատերը, հետևաբար, վերջին հանգամանքը մեծացնում է երեխաների հետաքրքրությունը տվյալ աշխատանքի ձևի նկատմամբ, ակտիվացնում է նրանց թե' մտավոր և թե' խոսքային գործունեությունը:

Նշված աշխատանքի ձևերից յուրաքանչյուրի ուսուցումն իրականացվում է առանց երկխոսության վրա հենվելու: Աշխատանքի նոր ձևին ծանոթացնելուց հետո կատարվում է տրված օրինակի մանրակրկիտ վերլուծություն, որից հետո կոլեկտիվ ձևով կազմվում է պլանը, բանավոր պատմվում ըստ պլանի, վերջում երեխաներն այն գրում են տետրերեում: Բանավոր պատմելու ժամանակ ուսուցիչը հնարավորություն է տալիս սովորողներից մեկին արտահայտվելու ամբողջությամբ՝ պլանի կետերով: Ընդ որում, ուսուցիչը չի ընդհատում, հարցեր չի առաջադրում, նա պարզապես ղեկավարում է պատմության տրամաբանությունը: Այսպիսի մոտեցման դեպքում ուսուցիչն, իսկապես, զարգացնում է երեխայի կապակցված խոսքը:

Որպեսզի կանխվեն գրավորի ուղղագրական սխալները, գրելուց առաջ անպայմանորեն պետք է անցկացնել ուղղագրական նախապատրաստական աշխատանք:

Աշխատանքը գրառելուց հետո աշակերտներին առաջարկվում է կարդալ և ուղղել դրանք: Քանի որ տարրական դասարանների չլսող երեխաների մեջ բացակայում է ինքնահսկումը, այդ պատճառով ուսուցիչն ընդգծում է սխալները, իսկ աշակերտները ուղղում են դրանք: Դժվարության դեպքում ուսուցիչը կարող է օգնել:

Ստեղծագործական ունակությունների զարգացման նպատակով ուսուցիչն օգտագործում է աշխատանքը կազմակերպելու տարբեր ձևեր՝ զույգերով, խմբերով, աշակերտի ղեկավարությամբ և այլն:

Իրադարձությունների նկարագրություն: Նկարագրությունը, որպես խոսքային գործունեության ձևերից մեկը, կարևոր տեղ է գրավում չլսող երեխաների ուսուցման համակարգում: Նրանք սովորում են նկարագրել իրենց կյանքի հիմնական իրադարձությունները: Մինչդեռ այս երեխաները իրադարձություններ նկարագրելիս թույլ են տալիս էական սխալներ:

Դժվարություններն առաջանում են հիմնականում այն պատճառով, որ երեխաները դժվարանում են առանձնացնել հիմնականը, այնուհետև՝ սեփական կյանքից որևիցե իրադարձություն նկարագրելիս, փաստորեն, երեխան պատմում է այնպիսի դեպքերի մասին, որոնց ականատեսը եղել է նախկինում: Հետևաբար նկարագրել պատկերացնելով ավելի բարդ է, քան՝ ընկալելով: Վերջապես, կյանքի որևէ իրավիճակ երեխան ընկալում է ավելի պակաս հստակությամբ և նպատակամղվածությամբ, քան նկարը: Այս ամենից բացի, պետք է նշել, որ կարևոր է իրադարձության հուզական և

նշանակալից լինելը, որը մեծացնում է աշխատելու շահագրգռվածությունը:

Սովորողներն առավել հեշտությամբ նկարագրում են սովորական օրը: Հանգստյան օրերին երեխաներն ավելի շատ հանգստանում են, այդ օրերին բացակայում են ստերեոտիպ, ռեժիմային պահերը, հանգստյան օրերին կարող են տեղի ունենալ անակնկալ իրադարձություններ: Սրա հետ կապված՝ հանգստյան օրերը նկարագրելն ավելի հետաքրքիր է, սակայն ավելի դժվար, քանի որ այն ստեղծագործական մոտեցում է պահանջում:

Նկարագրվել կարող են տոները, արձակուրդները և այլն: Սրանցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները: Չնայած դրան, կարելի է նշել այն ընդհանուրը, որը բնորոշ է կապակցված արտահայտությանը. դրանք պետք է ամբողջությամբ ներկայացնեն բովանդակությունը, ավելորդ տեղեկատվությունը պետք է բացակայի, շարադրումը տրամաբանական հաջորդականություն պետք է ունենա, միտքը պետք է արտահայտվի տեղին և ճիշտ բառերով:

Խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքների համակարգում իր ուրույն տեղն ունի բառի կամ բառակապակցության օգտագործումը **կապակցված խոսքում**, քանի որ և՛ բառապաշարի հարստացումն ու քերականության ուսուցումը, և՛ խոսք կառուցելու կարողության ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանքները իրենց փոխկապակցումը գտնում են կապակցված խոսքի մեջ:

Այդ առումով ամենապարզ ու մատչելի առաջադրանքը **տեսածի, լսածի ու զգացածի մասին պատմելն է.**

Նկարների բովանդակության վերարտադրումը ևս նպաստում է խոսքի զարգացմանը: Նկարների շուրջ զրույցներ կարելի է կազմակերպել մանկական առօրյայից, բնության մեջ տեղի ունեցող փոփոխություններից: Զրույցների ընթացքում որքան հնարավոր է պիտի ցուցադրել գունեղ վերատպություններ:

Բանավոր խոսքի զարգացմանը նպաստում է նաև **հեքիաթներ պատմելը:** Երեխաները շատ են սիրում հեքիաթներ և հաճույքով պատմում են իրենց լսած ու կարդացած հեքիաթները: Երեխաների նհաճախակի պետք է հնարավորություն տալ բարձրաձայն պատմելու իրենց իմացած կամ գրքերից կարդացած հեքիաթները. Դա մեծապես կնպաստի նրանց մեջ պատմելու կարողության զարգացմանը և կհոկի ու կկատարելագործի խոսքը:

Անգիր անելը նույնպես կարևոր նշանակություն ունի երեխաների բանավոր խոսքի

զարգացման համար: Ոտանավորներ ու գեղարվեստական արձակ հատվածներ անգիր սովորելը մեծապես նպաստում է տվյալ նյութի բովանդակության խորը ընկալմանը, միաժամանակ օգնում երեխաների լեզուն հարստացնելու նոր բառերով ու դարձվածքներով, բարձրացնում նրանց խոսքի մշակույթը:

Դասարանում մշակված նյութի բովանդակության վերարտադրումը ևս արդյունավետ աշխատանք է այդ առումով:

Էքսկուրսիաներն ու բնության դիտումները նույնպես անփոխարինելի նշանակություն ունեն չլսող երեխայի խոսքի զարգացման համար:

Նամակ: Նամակը կապակցված խոսքի զարգացման աշխատանքի ձև է: Սովորողները նամակներ են գրում իրենց հարազատներին, ընկերներին: Նամակը գրավոր խոսքի յուրահատուկ ձև է, որն ունի որոշակի ձև և յուրահատուկ բառապաշար: Նամակի գրության ուսուցումը լսողության խանգարումներ ունեցող երեխաների դպրոցում սկսվում է II դասարանից: Չլսող II դասարանցիները մեծ դժվարությամբ են նամակ գրում և շատ սխալներ են թույլ տալիս: Այդ պատճառով II դասարանում ուսուցիչը բավական մեծ օգնություն է ցուցաբերում երեխաներին: Նա պետք է սովորեցնի երեխաներին ոչ միայն պահպանել տրամաբանությունը, ճիշտ ձևակերպել նամակի սկիզբը և վերջը, այլև պետք է կանխի քերականական սխալները: Այդ նպատակով ուսուցիչը նամակը կարող է գրել գրատախտակին և կարդալով՝ վերլուծության ենթարկել: Դրանից հետո երեխաները գրում են նամակը կամ օրինակով, կամ էլ ինքնուրույն:

II դասարանում ուսուցիչը կարող է առաջադրել պլան, որին համապատասխան, երեխաները գրում են կոլեկտիվ նամակ գրատախտակին: Ընդ որում յուրաքանչյուր հատվածը գրում են համապատասխան կետի դիմաց: Դրանից հետո գրատախտակին գրվածը ծածկվում է, և սովորողները նամակը գրում են ինքնուրույն (պլանին համապատասխան), թույլ սովորողներին թույլատրվում է օգտվել գրատախտակից

Եզրակացություն

Այսպիսով ուսումնասիրելով հատուկ գիտամեթոդկանա գրականությունը թեմայի վերաբերյալ և հիմնախնդրի դրվածքը լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրում , թույլ տվեց մեզ գալ հետևյալ եզրահանգումների.

- որ հանրակրթական դպրոցում գործող գրաճանաչության ուսուցման լեզվաբանական հիմնավորումը ակնհայտորեն բավարար չէ թույլ լսող երեխաների համար: Պետք է հաշվի առնել նաև այն փաստը, որ թույլ լսող երեխաները խոսքի բանավոր և գրավոր կոդերը յուրացնում են միաժամանակ և երբեմն նույնիսկ գրավորի յուրացումը առաջ է անցնում բանավոր խոսքի յուրացումից:
- Առանց խոսքի ընկալման և արտաբերման կարողությունների կատարելագործման, անհնար է նաև խոսքի իմաստային կողմի յուրացումը, լեզվի կառուցվածքի ճանաչումը (պրակտիկ կարողությունների յուրացման համար, խոսքը պրակտիկայում օգտագործելու համար, բառագոյացումը, բառակազմությունը և այլն):
- Գրաճանաչության յուրաքանչյուր դասը պետք է կառուցվի հատուկ ընտրված նյութի հիման վրա (հնչյուններ, տառեր, վանկեր, բառեր, արտահայտություններ և կարճ բնագրեր): Իմաստ չունի կարդալու, վերլուծելու և համադրելու վարժություններ կատարել երեխաներին անծանոթ բառերի հիման վրա:
- Կարդալու և գրելու հմտությունների յուրացումը թույլ լսող երեխաների կողմից պետք է ընթանա միաժամանակ և փոխկապակցված լինի բանավոր խոսքի ու մտածողության զարգացման գործընթացի հետ:
-

Գրականության ցանկ

1. Գյուլամիրյան Ջ. Հ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր., 2015, էջ 68-89:

2. Գյուլամիրյան Ջ. Հ., <<Զանգակ>> այբբենարանի մեթոդական ուղեցույց, Եր., 2014

3. Մանուկյան Ա.Վ. Լսողության խանգարում ունեցող երեխաների հետ տարվող սուրդոմանկավարժական աշխատանքները – (Ուսումնամեթոդական ձեռնարկ) Երևան, 2016, 112 էջ

4. 3.Комаров К. В., Методика обучения русскому языку в школе слабослышащих детей.- М., 2005, с. 40-65.